ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2014 թ.
1-ին կիսամյակի հաշվետվության ժողովից:
կայացած 18. 07.2014թ. նախագահությամբ Ռ.Ստեփանյանի
քարտուղարությամբ Հ.Հակոբյանի.

Լսեցին համայնքի ղեկավար Ռ. Ստեփանյանի զեկուցումը 2014թ. 1-ին կիսամյակի կատարված աշխատանքների հաշվետվության մասին:
Նիստին մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ Փառանձեմ Կարապետյանը, ավագանու հինգ անդամներ, գյուղապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, համայնքի 100 անդամներ:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց հետևյալ աշխատանքները, որոնք կատարվել են 2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում:

1. Ավագանու նիստ.
2. Կատարված շաբաթօրյակներ.
3. 2014թ. հավաքված հողի հարկը և գույքահարկը

հողի հարկ	14758335	_ դրամ
գույքահարկ	2550000	_ դրամ

Ժողովի նախագահ Ռ. Ստեփանյան

Քարտուղար Հ.Հակոբյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2014թ. առաջին կիսամյակին կատարած աշխատանքների:

1-ին կիսամյակում հրավիրվել է ավագանու 6 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2014թ բյուջեում:
Առաջին նիստով զիջվել է լ համայնքի անապահով բնակչի ավտոմեքենայի գույքահարկը: Նույն նիստով 300000 դրամ է տրամադրվել <<Արմավիրի երիտասարդական նախաձիրությունների >> հիմնադրամին:
Համայնքի առնտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:
30.01.2014թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված ձյունից:
Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները : Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:
Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:
2-րդ նիստով փոփոխություն է կատարվել համայնքի 2014 թվականի բյուջեում, գումար է տրամադրվել համայնքի 12 անապահով ընտանիքներին տրամադրվել է 300 000 դրամ դրամական օգնություն:
փոփոխություն է կատարվել 2013 թվականի բյուջեի և հաստիքացուցակի մասին որոշման մեջ;

3-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը:
Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 5 սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր առմամբ 210000 դրամ:
05.04.2014 թվականին համայնքի բնակիչների , աշխատակազմի ներկայացուցիչների ներկայությամբ ներկայացվեց Փշատավան համայնքում հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:
4-րդ նիստով հաստատվել է 2014 թվականի գարնանը ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների ցուցակները և ուղարկվել է մարզպետարան: Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով 6 ընտանիքների ընդհանուր առմամբ 225000 դրամ:
Փշատավան համայնքի հակակարկտային կայանների սպասարկման համար ավագանին որոշում է եռամսյակը 90000 դրամ տրամադրվի:
Զիջվել է Փշատավան համայնքի բնակիչ Գևորգ Հովհաննիսյանի ավտոմեքենայի գույքահարկը:
Փշատավան համայնքում կադաստրային չափագրումներ կատարելու համար տրամադրվել է 300000 դրամ :
5-րդ նիստով փոփոխություն է կատարվել <<Փշատավան համայնքի բյուջեի և հաստիքացուցակի >> մասին որոշման մեջ: Փշատավան համայնքի 13-րդ փողոցը գազաֆիկացնելու համար ավագանին տվել է իր թույլտվությունը:

դիմումներին ի պատասխան տրամադրվել է 445 տեղեկանքներ:

2014թվականի 1-ին կիսամյակի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը հետևյալն է՝

1-ին կիսամյակ	հողի հարկ	1475835դրամ
	գույքահարկ	2550000 դրամ
	հողի վարձավճար	108250 դրամ
	տեղական տուրք	89000 դրամ
	Խմելու ջրի վարձ.	37500 դրամ

Փշատավան համայնքի հիմնախնդիրներ՝

1. Փշատավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում:
2 Փշատավան համայնքի մշակույթի տան մուտքի աստիճանահարթակի վերանորոգում:
3. Փշատավան Արգավանդ ճանապարհի կապիտալ նորոգում:
4. Համայնքի լիարժեք գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար Ռ. Ստեփանյան

2014թվականի գարնանը տեղի ունեցած ցրտահարության պատճառով զիջվել է համայնքի բնակիչների խմելու ջրի վարձավճարը:
Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել և ավազ է լցվել այդ ճանապարհների վրա:
07.03.2013թ. համայնքում իրականացվել է շաբաթօրյակ, որի արդյունքում աղբից մաքրվել է Արգավանդ-Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը կուտակված աղբից:
Մարտի 3-10 ը կազմակերպվել է շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան այգու տարածքը, սպիտակեցվել է այգու ծառերի բները և կատարվել է ծառերի սանիտարական հատումներ:
Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով:
Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցին վերջին զանգի առիթով գյուղապետարանը նվիրել է օդափոխանակիչ , նվերներ դպրոցի կոլեկտիվին և շրջանավարտներին ՝ ընդհանուր առմամբ 540000 դրամ 6-րդ նիստով , դրամական օգնություն է տրամադրվել համայնքի կարիքավոր ընտանիքներին , զիջվել են համայնք զինծառայողներին պատկանող ավտոմեքենաների գույքահարկը:
<<Փշատավան համայնքի բյուջեի և հաստիքացուցակի մասին >> որոշման մեջ կատարվել են փոփոխություններ;
:
2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 56 որոշում, 24 կարգադրություն: Համայնքի բնակիչներին իրենց